

73ԻԴ ՏԱՐԵԴԱՐՁ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ

Խնչպես ճամագոյի բովանդակ տարած-
 քին վրայ սփռուած Հայ գաղութները, Երու-
 սաղիմի նստացած Հայ գաղութը եւս, ա-
 ռւսնց կուսակցական եւ դաւանական խթ-
 րութեան — կազմուած եր Եղեռնի Ողբեր-
 ցան Միացեալ Յանձնախումբ — այս տարի
 եւս արժանաւայել կերպով եւ իր ուժերուն
 ու տեղական պայմաններուն ներքո չափով
 ողբերկոյնց յիշատակը Ապրիլեան մեր բիւրա-
 ւոր ճանապարհներուն:

Այս տարուան Ապրիլի 24ը զուգարկած
 ըլլալով Աշխարհամաստան (Կանաչ) Կրթակի
 օրուան, օրուան հանդիսաւոր եւ հանգստեան
 Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարու-
 քին, Քրիստոսի Սուրբ Գերեզմանին վրայ.
 Պատարագին եր Լուսարարապետ Գերբ. Տ.
 Գաւթեան Արքեպ. Պաշտօնեան, որ իր բա-
 րոցին մէջ պահնացուց յիշատակը մեր մա-
 ռանակաւ մարտիրոսներուն, որոնք իրենց
 արիւնն ու կեանքը ընծայաբերեցին, չբաժ-
 նուելու համար Հայութեան եւ Քրիստոսեւո-
 թեան: — Եւնդուտեանն եւս, Միաբանու-
 քիւն ճամբայ ելաւ դէպի Մայրավանք ուր
 քիչ եւս — երբ գերեք կեսօր եր — մեծ ու
 սգազողանջ զանգը Մայր Տանուր կը հրաւի-
 ռէր ժողովուրդը, ներկայ ըլլալու հոգեհան-
 զըստեան հանդիսաւոր պատգամուցին: Արա-
 րողութեան նախադասից Ամեն. Ս. Պատրիարք
 Հայրը, որ ապա զլիաւորեց դէպի Սինի
 (Ս. Փրկչի) Ազգային Գերեզմանատունը ըն-
 ցացող երկարածից քափօր: Կային քանի ըր
 լիղւանքով — Հայերէն, Անգլերէն, Ֆրան-
 սերէն, Արաբերէն, Եբրայերէն — պատգա-

լողունքներ՝ Հայկական Յիւստապոստոսիւնը
 դատաւարեց: Հանգստեան տարականգնու-
 երգեցողութեամբ, քափօր հասաւ գերեզ-
 մանաւան մէջ գտնուող Արարայի Նահատե-
 կաց Յուսարմար, որուն ոտին գետեղան-
 ցան ազգային զանազան կազմակերպութիւ-
 ներէ եկած ծաղկեպսակներ: Նորին Ամենա-
 պառուրեան նախազանգութեամբ կատա-
 րուած Հանգստեան Կարգէն եւս, խուռներմ
 բազմութեան զիմաց խօսք առաւ գաղութի
 ծանօթ ազգայիններէն դիպագործ Տիար Նու-
 պար, որ մին է աղէտէն ճողպարածներէն,
 յայտնելով քե անկարելի է մոռնալ քե՛ մեր
 անմահանուն ճանապարհներ եւ քե հողային
 մեր արդար պահանջները, հակառակ եղեռ-
 նին եւ այսօրուան միջեւ պառկող մօտ երեք
 հազարը դարու անցալիցին:

Վանք դարձն, ներկաներ խմբուեցան
 ժառանգ. Վարժարանի բակը, ուր հոգե-
 սուրենն եւս հակիրճ խօսքով հանդէս եկաւ
 Տիար Գեորգ Սեւան, անդադառնալով ժա-
 մանակէն ձգուելու փոխարէն մեր տա-
 ութիւն ժողովուրդի սրտին մէջ վարարող
 իրաւ ու մահուր հայրենասիրութեան զգա-
 ցունքին, որուն վերջին արձագանքներ եկան
 Մայր Հայրենիքէն, լեռնային Ղարաբաղի
 հարցին աղբնութեամբ:

Բարձրախօսէն ծորող հայրենասիրական
 երգեր քափ կու տային ներկաներու ազգա-
 յին զգացունքներուն:

Խարսկեան մամուլը, ձայնասփիւնը ու
 հեռաձայնը համառօտ կերպով անդադար-
 ձան Հայկական Յիւստապոստոսիւն:

Լորաց համար կարգադրուած է որ տարւ
 հոգիէ բազկացեալ խուռներ՝ հոգեւորականի
 ժը զլիաւորութեամբ եւ կառավարական
 յատուկ արտաստուածով կարենան ժողով
 Տանարը, իրենց յաւաք կատարել եւ ելիլ
 անյապաղ:

(Նոյն, անդ):

Բշ. 11 Ապրիլին, Վեհ. Հայրապետի
 մահուան բօթը գաւթող հեռագիրը ցնցեց
 ամբողջ Միաբանութիւնը, որ փութաց
 Պատրիարքարան, իր ցաւակցութիւնը
 յայտնելու Նորին Ամենապատուութեան:

(Նոյն, էջ 167):